ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

17.09.2018Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 11 անդամները:
Բացակայում են Տարոն Եփրեմյանը, Նարեկ Բաբայանը,Անատոլի Գասպարյանը, Նորիկ Վարդանյանը:

Նիստը վարում է համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը:

Համայնքի ղեկավարի տեղակալ ***Վ. Չիլինգարյանի*** հրավերով ավագանու նիստին մասնակցում են ***համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Շ.Սարգսյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր՝ Վ.Բարսամյանը, Հ.Բալբաբյանը , Ա. Ծերունյանը, Ս.Շահնազարյանը, գլխավոր մասնագետ-հաշվապահ Գ.Աֆյանը և համայնքի գյուղերի վարչական ղեկավարները:***

<u>Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան</u>

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը՝
Հաստատել համայնքի ավագանու թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալներին օտարելու համաձայնություն տալու մասին:
2. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:
3. Որպես համայնքային սեփականություն հողատարածք ձեռք բերելու մասին:
4. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 89 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
5. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 76 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
6. Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին:
7. Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների կազմը համալրելու մասին:
8. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:

<u>Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան</u>

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցերի վերաբերյալ:

Կողմ -11 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. **Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալներին օտարելու համաձայնություն տալու մասին:**

/Զեկ.Վ.Չիլինգարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և 77-րդ հոդվածով՝ ***առաջարկում եմ*** տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալներին օտարելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացիների դիմումների.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ՀԱՍՑԵՆ	ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Է ՀԱՏԿԱՑՎՈՒՄ	ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ
1.	**Հրանուշ Սարգսյան**	**5-8-33**	**5 600 000**	**Սեփականություն**	**Անհատույց**

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 11 **դեմ - 0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. **Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:**

/Զեկ.Բ.Բալբաբյան /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝առաջարկում եմ, թույլատրել 10 տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու համայնքի սեփականություն հանդիսացող ք.Չարենցավան Օղակային փողոց թիվ 11 «Ա. Խաչատուրյանի անվան ՄԵԴ» ՀՈԱԿ-ի շինության կիսանկուղային հարկից 177.6քմ մակերեսով տարածք:

<u>Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 11 **դեմ - 0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. **Որպես համայնքային սեփականություն հողատարածք ձեռք բերելու մասին:**

/Զեկ.Բ.Բալբաբյան /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 77-րդ հոդվածի 3-րդ մասով, 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետի 2018 թվականի օգոստոսի 13-ի զեկուցագիրը,***առաջարկում եմ*** տալ համաձայնություն ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի թիվ 2 գերեզմանատունը ընդլայնելու նպատակով գերեզմանոցի հարակից հատվածներում ձեռք բերել 1.0 հա հողատարածք ողջամիտ շուկայական գնով:

:

<u>Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան</u>

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-11 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4.Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 89 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին *:*

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով և հաշվի առնելով Չարենցավան համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանի (մուտք՝ 2018 թվականի օգոստոսի 29-ի N 2554-04, 2556-04, 2555-04), համայնքապետարանի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ բաժնի պետ Բ. Բալբաբյանի (մուտք՝ 2018 թվականի օգոստոսի 29-ի N 2557-04, 2558-04, 2018 թվականի օգոստոսի ի N 2572-04, 2018 թվականի սեպտեմբեի 05-ի N 2664-04,), համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ-հաշվապահ Գ. Աֆյանի (մուտք՝ 2018 թվականի օգոստոսի 29-ի N 2553-04), Չարենցավան համայնքի Կարենիս գյուղի վարչական ղեկավար Ա. Բաղդասարյանի (մուտք՝ 2018 թվականի օգոստոսի 29-ի N 2559-04), Արզական գյուղի վարչական ղեկավար Լ. Մարգարյանի (մուտք՝ 2018 թվականի օգոստոսի 29-ի N 2552-04) զեկուցագրերը և Բջնի գյուղի վարչական ղեկավար Ա. Մաթևոսյանի (մուտք՝ 2018 թվականի սեպտեմբերի 11-ի N 2725-04) գրությունը,***առաջարկում եմ***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Չարենցավան համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 89-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հաստատված բյուջեի վարչական մասի՝

ա. **7422** «Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ» հոդվածի «54963.7» թիվը փոխարինել «53265.4» թվով,

2) Հաստատված բյուջեի ֆոնդային մասի՝

ա. **8411** «Հողի իրացումից մուտքեր» հոդվածի «94401.7» թիվը փոխարինել «104215,56» թվով,

3) Համայնքի բյուջեի ծախսերի վարչական մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. 0451 «Ճանապարհային տրանսպորտ» - ի 4251 «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» սինթետիկ հաշվի «32900,0» թիվը փոխարինել «27900,0» թվով,
բ. 0511 «Աղբահանում» - ի 4213 «Կոմունալ ծառայություններ» սինթետիկ հաշվի «57463,4» թիվը փոխարինել «58300,0» թվով,
գ. 0611 «Բնակարանային շինարարություն» - ի 4521 «Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպություններին» սինթետիկ հաշվի «1950,0» թիվը փոխարինել «5775,0» թվով,
դ. 0661 «Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» - ի 4241 «Մասնագիտական ծառայություններ» սինթետիկ հաշվի «2650,0» թիվը փոխարինել «845.6» թվով,
ե. 0824 «Այլ մշակութային կազմակերպություններ» - ի՝
եա. 4237 «Ներկայացուցչական ծախսեր» սինթետիկ հաշվի «1000,0» թիվը փոխարինել «0» թվով,
եբ. 4239 «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» սինթետիկ հաշվի «4818,1» թիվը փոխարինել «3408,8» թվով,
զ. 0842 «Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ» - ի 4819 «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» սինթետիկ հաշվի «1100,0» թիվը փոխարինել «150,0» թվով,
է. 0981 «Կրթություն (այլ դասերին չպատկանող)» - ի 4637 «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» սինթետիկ հաշվին հատկացնել 1000,0 հազ. դրամ,
ը. 1071 «Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)» - ի 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվի «13000,0» թիվը փոխարինել «15500,0» թվով,
թ. 0111 «Զարենցավանի համայնքապետարանի պահպանման ծախսեր» -ի՝
թա. 4241 «Մասնագիտական ծառայություններ» սինթետիկ հաշվի «1590.0» թիվը փոխարինել «1810.0» թվով,
թբ. 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվի «13000,0» թիվը փոխարինել «2500,0» թվով,
թգ. 4112 «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» սինթետիկ հաշվի «3000,0» թիվը փոխարինել «13500,0» թվով,
ժ. 0421 «Գյուղատնտեսություն»-ի 4241 «Մասնագիտական ծառայություններ» սինթետիկ հաշվին հատկացնել 83.8 հազ. դրամ:

4) Համայնքի բյուջեի ծախսերի ֆոնդային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. 0161 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» - ի 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» սինթետիկ հաշվի «5650,0» թիվը փոխարինել «7650,0» թվով,
բ. 0981 «Կրթություն (այլ դասերին չպատկանող)» - ի 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» սինթետիկ հաշվին հատկացնել 6863,86 հազ. դրամ,
գ. 0561 «Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)» սինթետիկ հաշվի 5122 «Վարչական սարքավորումներ» սինթետիկ հաշվի «9439.6» թիվը փոխարինել «0» թվով,
դ. 0561 «Կանաչ տարածքների հիմնում և պահպանում»-ի 5122 «Վարչական սարքավորումներ» սինթետիկ հաշվին հատկացնել 9439.6 հազ. դրամ,
ե. 0611 «Բնակարանային շինարարություն» - ի 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» սինթետիկ հաշվին հատկացնել 950.0 հազ. դրամ:

2. Թույլատրել գնումները կատարել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

<u>Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Լսեցին.

5. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 76 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

/Զեկ.Շ.Սարգսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով և հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Մաքուր Չարենցավան» ՀՈԱԿ-ի տնօրեն Վ.Աբրահամյանի, Բջնի գյուղի վարչական ղեկավար Ա. Մաթևոսյանի 2018 թվականի օգոստոսի 20-ի թիվ 019-057, Ալափարս գյուղի վարչական ղեկավար Ա. Սարիբեկյանի 2018 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 27, Արզական գյուղի մանկապարտեզի տնօրեն Ա.Հովսեփյանի 2018 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 17, «Գառզուի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն Տ.Սաղաթելյանի 2018 թվականի օգոստոսի 30-ի թիվ 63 գրությունները,***առաջարկում եմ՝***

1.Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 76 որոշման 6-րդ, 7-րդ, 8-րդ, 11-րդ և 16-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ:

Կողմ-10 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Լսեցին.

6. Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին:

/Զեկ.Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հինք ընդունելով Կոտայքի մարզպետի 11.07.2018թ N01/13.2/3130-18 գրությունը, հիմք ընդունելով Միհրան Միքայելյանի դիմումը,**առաջարկում եմ՝** հաստատել Միհրան Միքայելյանի թեկնածությունը ՀՀ Կոտայքի մարզպետին առընթեր Երիտասարդական Խորհրդի կազմում, որպես ոչ պետական հատվածը ներկայացնող անդամի:

.***Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան***

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9 **դեմ-0** **ձեռնպահ-1**

Մնացական Պողոսյան

Լսեցին.

7. Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների կազմը համալրելու մասին:

/Զեկ.Ս. Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետով և 84-րդ հոդվածով, հինք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2017թվականի նոյեմբերի 20-ի թիվ 68 որոշմամբ սահմանված կարգը.

Հաշվի առնելով մեր համայքում քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացով պայմանավորված առաջացած հանրային պահանջը և բնակչության համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններում ընդգրկվելու բազմաթիվ դիմումների առկայությունը՝***առաջարկում եմ*** համալրել համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի կազմը՝համաձայն՝ հավելված 1-ի:

2.Համալրել կրթության, մշակույթի երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական /այդ թվում՝ երեխաների պաշտպանության/ հարցերի խորհրդակցական մարմնի կազմը՝ համաձայն՝ հավելված 2-ի:

3.Համալրել քաղաքաշինության,հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի խորհրդակցական մարմնի կազմը հավելված 3-ի:

4.Սահմանել, որ սույն որոշմամբ ձևավորված խորհրդակցական մարմինները գործելու են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտըՍույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

<u>Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ 6 **դեմ- 3** **ձեռնպահ-1**

Պողոսյան Մնացական **Երիցյան Գագիկ**

Վարդանյան Նորայր

Փանոսյան Արթուր

Լսեցին.

8. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան /

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 46-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ ***առաջարկում եմ*** թույլատրել համայնքի սեփականության ներքո գտնվող հողատարածքը աճուրդային կարգով օտարելու՝ համաձայն հավելվածի:

Հ/Հ	ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ	ՄԱԿԵՐԵՍԸ ՔՄ/ծածկագիր/	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԸ	ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ
1	Չարենցավան համայնք գ. Բջնի	900քմ 07-007-0201-0034	Գյուղատնտեսական այլ հողատեսք	Սեփականություն	7200 ՀՀ դրամ

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ 10 **դեմ- 0** **ձեռնպահ-0**

Բաբայան Վալերի

Գասպարյան Մելիք

Դավթյան Կարեն

Երիցյան Գագիկ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Խլղաթյան Արսեն

Պողոսյան Մնացական

Սահակյան Երեմ

Փանոսյան Արթուր

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Շ. Սարգսյանը _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ